

աւելի նոր ժամանակներս Չիթունիներ, որոնք ժողովուրդին ծոցէն դուրս քաշեցին գրական մարգրիտներ: Այդ ապացոյց էր թէ հայ ժողովուրդը արժանի չէ մեռնելու:

Յարդ գաւառը մեր աչքին առջեւ լծորդուած է խաւարի հետ: Մենք մեծ մասամբ գաւառը կը ճանչնանք իր տգիտութիւնով եւ յետամնացութեամբ: Բայց գաւառը իմ աչքիս առջեւ կը պատկերանայ իբրեւ սրբավայրը հայ գեղարուեստի նշխարներու, հոն կը տեսնեմ հայ երգը՝ հայ գեղջուկին շրթներուն վրայ, հայ գութանը, հայ գեղջուկը՝ իր արօրին ու մաճկալին հետ, ու քարերն անգամ նուիրականութիւն մը կը յիշեցնեն ինծի: Այդ քարի բեկորներն են մեր հայրենիքը, ազնիւ հանդիսականներ, հոն են շեշտերը մեր գեղարուեստին, եւ ոչ թէ մայրաքաղաքներուն մէջ, ուրկէ մենք այդ գաւառը կը դիտենք իբրեւ խաւարի վայր:

Ռուբէն Զարդարեան, որուն կը նուիրէ Էսաեան սանուց միութիւնը իր չորրորդ Գրական ասուլիսը, մէկն է հայ գրականութեան սակաւաթիւ դէմքերէն, որոնք ճանչցած են գաւառը իր բնական եւ հոգեկան հարստութիւններով, եւ իրենց գործը կերտած են այդ հարստութիւններուն վրայ, որոնք ժողովուրդիին են. Զարդարեան, իբր յեղափոխական, իր սիրտը կապած է ժողովուրդին սրտին, եւ իբր գրագէտ, իր միտքը կապած է ժողովուրդին միտքին հետ: Ժողովուրդին գաւակն է Զարդարեան:

Ես իր *Ցայգալոյսը* դեռ այս տարի կարդացի: Երբ գայն կարդացի Զարդարեանը չպատկերացուցի բնաւ աչքերուս առջեւ, այլ ամբողջ ազգ մը, ամբողջ ժողովուրդ մը՝ իր գեղեցկութեամբն ու շքեղութեամբ: Այդ մատեանը գրքի մը տպաւորութիւնը չէր որ թողուց վրաս, այլ կեանքի մը, իր բաբախումներովն ու իր զգայնութեամբը:

Երբ կը թղթատէի իր էջերը, բառեր ու նախադասութիւններ չէր որ կը պատկերանային աչքիս առջեւ, այլ կարծես անծանօթ էակ մը իմ ձեռքէս բռնած կ'առաջնորդէր զիս անծանօթ վայրեր, դէպի գանձեր բիրազան եւ դէպի պերճութիւններ շողշողուն: Ու երբ Զարդարեանի